ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնք
ք.Վեդի, Թումանյան 6, +(374)60881111 vedimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒԼԻՍԻ 2024 թվականի N 1498-Ա

«ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2024 թվականի հունիսի 20-ին Վեդի համայնքի /այսուհետ՝ նաև Պատվիրատու/ և «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊ ընկերության /այսուհետ՝ նաև Ընկերություն / Կատարող/ միջև կնքվել է մշակութային միջոցառման ձեռքբերման ծառայությունների մատուցման N ՀՀ-ԱՄՎՀ-ԳՀԾՁԲ-24/05 ծածկագրով պայմանագիրը /այսուհետ՝ նաև Պայմանագիր/:

Վեդու համայնքապետարանի կարիքների համար մշակութային միջոցառման ձեռքբերման ծառայությունների մատուցման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի կարիքների համար մշակութային միջոցառման ծառայությունների մատուցման պարտավորությունը, համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակցույցի պահանջների:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը. Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, այն է՝

1. բեմահարթակը և սանդուխքները ըստ տեխնիկական բնութագրով սահմանված պահանջի պետք է լինեին 8*6 մ /տելեսկոպիկ կարքավորվող ոտքերով, բարձրությունը 1 մետր/ չափերի, մինչդեռ դրանք եղել են 6*6 մ չափերի:

2. ալյումինե կոնստրուկցիա բեմահարթակը ծածկով ապահովելու համար պետք է լիներ 10*8 մ /բարձրությունը 7 մետր, կոնստրուկցիաների հաստությունը 40 սանտիմետր/ չափերի, մինչդեռ եղել է 6*6 մ չափերի:

3. կոնստրուկցիաների հաստությունը չի ապահովել 40 սանտիմետրը:

4. համերգային լուսարձակները, որոնք պետք է լինեին թվով 68 հատ, տեղադրված են եղել թվով 42-ը :

5. լուսադիոդային թվով 4 էկրանները, որոնց ընդհանուր մակերեսը պետք է լիներ 26 քմ, մինչդեռ ընդհանուր մակերեսը եղել է 24 քմ:

6. միջոցառման ընթացքում պետք է ներկա գտնվեին և անխափան ընթացքը ապահովեին համապատասխանաբար հնչյունային ռեժիսորը, լեդ էկրանների ինժեները, լուսավորողը և այլ սպասարկող անձնակազմ, մինչդեռ վերջինների կողմից չի պահպանվել միջոցառման՝ տեխնիկական բնութագրով սահմանված անխափան ընթացքը:

Վեդու համայնքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, 12.07.2024 թվականին միակողմանի լուծել է պայմանագիրը 6198800 (վեց միլիոն հարյուր իննսունութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդօրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդօրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Մասնակցի						
			գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակիցը հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
«ԱՄԱՓ ՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ	01063649	Ք.Երևան Բաբաջանյան փ,39/313		V		22.07.2024թ. N ՀՀ-ԱՄՎՀ-ԳՀԾՁԲ-24/05

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով, ***որոշում եմ՝***

1. «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 /երկու/ տարի ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, վերջինիս տվյալները սույն որոշման կայացման հաջորդող օրը ներկայացնել լիազոր պետական մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին՝ էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2024թ. հուլիսի 22
ք. Վեդի